«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 45/02-5

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 30.08.2019թ. ժամը 16:15

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված և 02.05.2019թ-ին լրացված,10.04.2019թ-ին ՀՀ Արդարադատության նախարարության կողմից վերահաստեղագրված, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,«Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչի/ների/ գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի/ների/ վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Ապրիլի 05-ին,Մայիսի 02-ին,Մայիսի 31-ին, Հուլիսի 02-ին ՝ ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում,հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստեր,որոնք չեն կայացել սնանկության գործով կառավարիչների առողջական վիճակի և դիմումատուի ներկայացուցչի չներկայանալու պատճառաբանություններով և հետաձգվել են տեղափոխվելով այլ հերթի:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի ս/թ-ի Օգոստոսի 30-ի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հարությունն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի տնօրեն՝ Գոռ Սուքիասյանը
«Խասուրո Գրուպ»ՓԲ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը և ներկա կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանը:

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու՝ «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի տնօրեն՝ Գոռ Սուքիասյանի լիազոր ներկայացուցիչ՝ Նարեկ Ազարեի Խաչիկյանը:

Հանձնաժողովի անախագահ Տ.Հարությունյանը ներկայացրեց ներկաներին,որ «Խասուրո Գրուպ»ՓԲ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Սողոմոնյանը նախկին նշանակված նիստերով ներկայացրած լինելով վարույթին անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը հեռախոսազանգով տեղեկացնելով վատ ինքնազգացողության մասին նիստին ներկա չի կարող գտնվել:
Իսկ «Խասուրո Գրուպ»ՓԲ ընկերության սնանկության գործով ներկա գործող՝ կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանը տեղեկացնելով «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին որ բուժման պռոցես անցնելու նպատակով գտնվում է ԱՄՆ-ում և նիստին մասնակցել չի կարողանա:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին և դիմումատուի ներկայացուցչին հայտնել կարծիք նիստը առանց սնանկության գործով կառավարիչների անցկացման վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ տվյալ գործով նիստը արդեն հետաձվում է նմանատիպ պատճառներով արդեն ապրիլ ամսից 4-րդ անգամ և հնարավոր չի լինում հավաքել բոլորին մի տեղում և այդ ընթացքում չկայացած նիստերին ներկաները,հանձնաժողովին ներկայացրել են բավականին նյութ և փաստաթղթեր,որոնք

կարելի է գնահատել առանց իրենց ներկայության ու իր առաջարկն է շարունակել նիստը առանց սնանկության գործով կառավարիչների և փորձել եզրակացության գալ նրանց ներկայացրած փաստաթղթերի և փաստերի հիման վրա:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը համաձայնելով այդ առաջարկի հետ ավելացրեց,որ իր տեղեկություններով սնանկության գործով ներկա կառավարիչը իսկապես ունի առողջության հետ լուրջ պռոբլեմներ և անհրաժեշտությունից ելնելով մեկնել է ԱՄՆ բուժման նպատակով,ուստի նրա ներկայությունը ապահովվել հնարավորչի և նպատակահարմար է նիստը շարունակել առանց նրա:

Դիմումատուի ներկայացուցիչը նույնպես համաձայնեց,որ նիստը հետաձգելը անիմաստ կլինի քանի որ ոչ ոք չգիտի թե բուժումը ինչքան կտեվի և երբ կառավարիչը կվերադառնա,առաջարկեց նիստը սկսել առանց նրա և միաժամանակ սկսել նրան փոխելու և նոր կառավարչի ընտրության պռոցես:

Հանձնաժողովի նախագահն՝նիստը առանց սնանկության կառավարիչների շարունակելու հարցը դրեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ - «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված և 02.05.2019թ-ին լրացված, 10.04.2019թ-ին ՀՀ Արդարադատության նախարարության կողմից վերահաստեղծագրված, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչի/ներ/ գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի/ներ/ վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝13.08.2019թ-ի ծանուցումներով ս/թ-ի Օգոստոսի 30-ի հրավիրված«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը շարունակել «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի և ներկա կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի բացակայությամբ և եզրակացության գալ նրանց և դիմումատուի ներկայացրած նյութերի և փաստաթղթերի հիման վար:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված և 02.05.2019թ-ին լրացված, 10.04.2019թ-ին ՀՀ Արդարադատության նախարարության կողմից վերահաստեղծագրված, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի և ներկա կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի՝ գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում-բողոքը ներկայացնելու համար ծայնի իրավունք տվեց դիմումատու՝«Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի տնօրեն՝ Գոռ Սուքիասյանի լիազոր ներկայացուցիչ՝ Նարեկ Խաչիկյանին,ով հակիրճ ներկայացնելով դիմում բողոքը և բողոքի լրացումը, մասնավորապես նշեց,որ սնանկության գործով ներկա կառավարիչ Հովհաննես Թոռչյանի կողմից սնանկության վարույթի գործառույթները կամ չեն կատարվում կամ կատարվում են շատ դանդաղ,որը վարույթի ընթացքում բերում է շատ խոչնդետների:Չնայաց այն բազմաթիվ փաստերին,որ

իրենց կողմից առաջարկվել է կառավարչին և իրավական և ֆիզիկական օգնություն,որ կառավարչի կողմից անհասկանալի պատճառներով չի ընդունվել:

Հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը ձայնի իրավունք վերցրեց և հարց ուղղեց դիմումատուի ներկայացուցչին արդյոք նա տեղյակ է «Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին»Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազության,15.04.2019թ-ի որոշմամբ հարուցված թիվ 13202519 քրեական գործի քննության ընթացքից:

Ներկայացուցիչ՝Ն.Խաչիկյանը պատասխանեց,որ իրենք նոր են ներգրավվել այս գործում և ամբողջ մանրամասներին չեն հասցրել ծանոթանալ,որը կկատարեն հետագայում:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց դիմումատուի ներկայացուցչին առ այն, որ նոր ներգրավված լինելով գործին և ծանոթանալով փաստերին,ներկայացված փաստարկներին և պատճառաբանություններին,մասնակի վերհանելով տեղի ունեցածի պատճառները,պնդում է արդյոք իրենց բողոքը:

Ներկայացուցիչը պատասխանեց որ իրենց բողոքը հիմնականում ուղղված է կառավարչի անգործությանը,որի հետևանքով վարույթին չմասնակցող անձինք տնօրինում են ըստ էության սնանկության վարույթի գույքը և հնարավոր է ստանում են եկամուտներ,որը կառավարչի աշխատանքի շնորհիվ կարող էր ստանալ ընկերությունը կառավարչի միջոցով և շահութը ուղղեր պարտատերերի պահանջների բավարարմանը,բայց՝այժմ ծանոթանալով գործին և ըմբռնելով պատճառները,որոնք ըստ էության կապ ունեն կառավարիչների առողջական վիճակների հետ,իրենք կարող է նաև փոխեն իրենց դիրքորոշումը եթե կփոխվի սնանկության գործով կառավարիչը և վարույթում կկատարվի օրենքով սահմանված բոլոր գործառույթները, այդ թվում նաև իր նշածները:Բայց հարցի վերջնական պատասխանը տալուց առաջ ինքը պետք է խորհրդակցի իր վստահորդի հետ և ճշտի նրա կարծիքը,այդ առումով խնդրեց հինգ րոպե ընդմիջել նիստը մինչև ինքը կկարողանա հեռախոսազանգի միջոցով կատարել կարծիքի ճշտումը:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց որ ստացված տեղեկատվությամբ կառավարիչ Հ.Թոռչյանի բուժումը երկար ընթացք է ստացել,որի հիմքով ՍԳ կառավարիչը դիմումներ է ներկայացնում դատարանին գործերից ազատվելու համար,այդ թվում նաև «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով:

Հեռախոսազանգի միջոցով դիմումատուի կարծիքը ճշտելուց հետո ներկայացուցիչ՝ Ն.Խաչիկյանը հնարավոր համարեց բողոքներից հրաժարումը եթե տեղեկատվությունը ճշտվի և մեկ ամսվա ընթացքում իրենք այս գործում կունենան նոր սնանկության գործով կառավարիչ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնի իրավունք վերցրեց և պարզաբանեց,որ ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են շուրջ 2.5 տարվա վաղեմություն ունեցող հնարավոր կարգապահական խախտումներին,որի վերաբերյալ դիմումատուն հանդիսանալով պարտապանի տնօրեն քաջատեղյակ է եղել բայց ինչ –ինչ պատճառներից ելնելով չի բարձրաձայնել և որևէ վերաբերմունք չի ցուցաբերել կառավարչի կողմից կարգապահական խախտումները վերհանելու կամ դրանք վերացնելու վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ համաձայն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.12 հոդվածի.

-Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմք հայտնաբերվելուց հետո՝վեցամսյա ժամկետում,բայց ոչ ուշ,քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթը չի կարող հարուցվել,իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Քանի որ ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են շուրջ 2-2.5 տարի վաղեմության հնարավոր կարգապահական խախտումներին ուստի վերընշված հիմքով Հանձնաժողովի նախագահն առաջարկեց մերժել Կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՄԳԿԿ» ԻԿԿ-ում 28.03.2019թ-ին ստացված և 02.05.2019թ-ին լրացված, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի և ներկա կառավարիչ՝ Հովհաննես Թոռչյանի՝ գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ կարգապահական վարույթի հարուցումը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.12. հոդվածի հիմքով մերժել,ներկայացված դիմումը,բացատրությունները և կից փաստաթղթերը կցել գործին:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան